

սունք որ թըմըմաւ, Տաւիթ մտաւ էօտէն աէսաւ, որ ազի իրենս շորի խեա ուրուրոցի ճաճկոցն էլ չուժ կամար կէլնի կիջնի նաֆաս առած ալած ժամանակ: Խանդիւթ խանըմ ներս որ մաւաւ, Տաւիթն ասաց. «Ընցած օր ես քրոյ մեղքն առի, բայց մկայ կատնամ, որ աղէն մեր զարմէն ի, մեր շնորքն ունի»:

127. Տղէն էլաւ ութ տարէկան, Կապուա Կողայ թագաւորի էրկու լաճերաց խեա կէրթար նէճիւր կանէր, կըրէր առւն: Զըմէնք կուտէին՝ Տաւիթին չին խտե: Տաւիթ ուր կընկեան կատի. «Ես Մհէրի չափուն որ խասայ, օր մէկ վէրու եղ նէճիւր կանէի. մկայ Մհէր կերթայ ճնճղուկ մը էլ չի կանայ բերե, չէլնի որ մեր զեարմէն չի»:

128. Մհէրն էլ վեր տաւն ահանճ կանէր. ներս մտաւ տրտում իրեսով, գնաց քնաւ: Առտուն որ վեր էլաւ, թագաւորին աղէյներ էկան Մհէրին կանչեցին, որ էրթան նէճիւր: Մհէր չգնաց խեաերնին, թէ էս օր կէրթանք գետի ալի ուրախութեն կանենք: Մհէր խեա էն էրկու աղին որ գնացին դետի ալի, էն տեղ մէկ ճըռչ բարտի ծաւ կէր. Մհէր ձեռքն իթալ էտ ծաւ կօռեց չուժ դէտին. թագաւորի աղէքներաց ասաց. «Եկէք նստէք վէրէն, տրանկիւզալ խաղանք»: Տղէքներ խարվան նտան վէրէն, էրկու ալի խաղուց թէ չէ, վեր իրեքին թող ալեց ծաւը. աղէյներ քսիլուն թափով զարկեց քեարին, որ լղզվան՝ մեռան: Ճիւլտայ գնաց թագաւորուն: Տաւիթն էլ երբ որ լսաւ, առաւ կիւռզ կնաց, որ Մհէրն սպանէր: Թագաւոր ուր կնիկ ինկան պառաւանս², ալին. «Թէ մեռեր են, մեր աղէյներ մեռեր են. ալի Մհէրն ինչի՞ կսպանես. Մհէրն իմ էրկու աղի տեղ կընդունեմ ես»:

Տաւիթ որ կիւռզով կղարնէր Մհէրին, Խանդիւթ խանըմ ինկեաւ պառաւանս, որ չթողնի, Մհէրն ասաց. «Օրհնեալ բարերար Աստուած» ու տառձաւ ասաց ուր մօր: «Իմ խօր տուպեր կնմանի Ծովասարու քամիին, որ կառնի իմ մաղերուն, ալի հոգ մաներ»: Տաւիթ շատ զարնելէն սորա՞ Մհէր բարկացաւ, խասաւ ուր խօր կիւռզն առեց, զարկեց մէջ խօր սրտին, Տաւիթն եկաւ մեռլի պէս մնաց չուժ առաւտուն:

129. Երբ նորէն խելք գլէօխն էկաւ, անիճեց ուր սրտին, ասաց. «Մհէր ալի որ ինկեար իմ իտե³, Աստծուց կիւնդրեմ պառուզ չիյնայ քրոյ իտե¹: Ինչ պառուզ որ իյնի քրոյ իտե, աշխար պիտի ալիքի: Խեա սկուն ասաց Տաւիթ, խրեշտակ էրկնուց իջաւ,

1 Տրորուել: 2 Պառաւան—Միջնորդ: 3 Ըստ գրի առնողի—ինձմ: ծնար: Բայց այստեղ նշանակում է եւ հալածել, որով յետագայ նոյն ոճի հետ բառախաղ է դրանում: 4 Որդի չունենաւ: